ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 105

«16» 11 2022 թ. ք. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզի դատախազ Էդուարդ Քաջիկի Հարությունյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու և մարզի դատախազի պարտականությունների կատարումը նույն մարզի դատախազի տեղակալ Գագիկ Արմենի Այվազյանի վրա դնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի նոյեմբերի 14-ի՝ համապատասխանաբար N 427-Ա և N 428-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է կատարել Գեղարքունիքի մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Էդ.Հարությունյանի կողմից՝ Գեղարքունիքի մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Գ.Այվազյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Մանասյան Անահիտ - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ

Հանձնախմբի անդամներ՝

Խաչատրյան Կարեն - Գեղարքունիքի մարզի դատախազի տեղակալ,

Մարտիրոսյան Հայկ -	ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ,
Նազարեթյան Արմինե -	ՀՀ դատախազության արխիվի բաժնի պետ,
Ղահրամանյան Մարուշ -	ՀՀ դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար,
Գևորգյան Թամարա -	ՀՀ դատախազության առաջին բաժնի պետի պաշտոնակատար,
Բադասյան Շուշան -	Գեղարքունիքի մարզի դատախազության տարածքային բաժնի պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2022 թվականի նոյեմբերի 30-ը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2022 թվականի նոյեմբերի 17-ին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ